

✓ P
277





12  
277

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻԵԱՆ

1999

# ԱՆԱՊԱՏԻՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

(Ա. ՀԱՏՈՐ)

ՏԵՏՐ ԵՕԹԵՐՈՐԴ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

## ՁԱՅՆԸ ՀՆՉԵՑ!...



ԳԱՀԻՐԷ, 1916

Տպագր. Զ. Ն. Պերպլեան



# ԹԱՏԻՈՆ ԲՐԷՆԹԱՆԻԱ

1916 Օգոստոս 5, Շաբաթ գիշեր, Ժամը 9-ին

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻԵԱՆԻ

„ՉԱՅՆԸ ՀՆՉԵՑ“ Ը

ԹԱՏԵՐԱՆՈՎ 4 ԱՐԱՐ ԵՒ 2 ՊԱՏԿԵՐ

(Կովկասահայ ռազմախուով կեանքէ)

ԲԱՐԵՀԱՋ ԾԱՍՆԱԿՅՈՒԲԵԱՄԲ

Օրհ. Ն. ՇԱԳՈՅԵԱՆԻ, ՆՈՒԱՐԳԻ, ԱՆՈՂԻՏԻ ԵՒ

ՓՈՒՐԻԿ ՍՐԵՈՂԻ ՓԱՓԱԶԵԱՆԻ

ԴԵՐԱԿԱՏԱՐԻԲԵԱՄԲ

«ՀԱՅ-ԲԵՄ» ԹԱՏԵՐԱՆՈՒՄԻ ԼՈՒԱԳՈՅՆ ՈՒՃԵՐՈՒՆ

ԼՖ 249



# ՁԱՅՆԸ ՀՆՉԵՑ!...

Թ.Ս.ՏԵՐԳՈՒԹԻՒՆ 4 ԱՐԱՐՈՒՄԸ ԵՒ 2 ՊԱՏԵՐ

Օգոստոս 5ի Շաբաթ իրիկունը Բեկնքանիա Թաս-  
րունին մեզ «Ձայնը Հնչեց...»ի առաջին ներկայացման  
առթիւ՝ ամեն կողմէ մեզի յայտնուած փափաքին գո-  
հացում՝ սալու համար, քասերախաղին նիւրբ արար-  
ուած առ արարուած կ'ամփոփենք հոս հակիրճօրէն :

## ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒՄԸ

Տեսարանը կը ներկայացնէ Չօրավար Իշխան Բագրատ Ասա-  
տուրօֆի տան ըն-  
դարձակ ճաշատրա-  
նը, ուր ծառաներ  
սեղան մը յարդա-  
րելու վրայ են : Նու-  
նիկ, Իշխանուհի Սօ-  
նիա Ասատուրօֆի  
աղախինը և Եագօր,  
Իշխան Բագրատի  
վաղեմի ծառան,  
խօսակցութեան մը  
մէջ երեւան կը բե-  
րեն Ասատուրօֆ  
զոյգին ընտանեկան  
ապերժանկութիւնը,  
անյարմար ամուս-  
նութեան հետե-  
ւանք : Այդ խօսակ-  
ցութենէն յայտնի  
կ'ըլլայ թէ փոխուած  
բան մը կայ Ասատու-  
րօֆ յարկին տակ :  
— Իշխանուհին, պըշ-  
րատէր կին, տես-  
նելով որ պատերազ-  
մը կը հեռացնէ իրմէ



Ռ.Կ.ԲՇԵ

ՕՐ. Ն. ՇԱՂՈՅՆԱՆ (Իշխանուհի Սօնիա)  
բոլոր ուշագրութիւնները, նախ կը ջղայ-



նոտի, կ'ընդգլխի, ապա հետզհետէ կը համակերպի ստեղծուած ուղ-  
մաշունչ կացութեան: Իր պէրասիրութիւնը զինաթափ չըլլար սա-  
կայն: Իշխանուհին կ'ուզէ փայլել ամէն գնով, և ասոր համար Տփղի-  
սի սալօններէն և աշխարհիկ շրջաններէն դուրս նետուել կ'անձկայ:  
Ա'լ չի կրնար հանդուրժել իր սիրահարին, նկարիչ Արշակ Ազար-  
եանցին, որմէ կը խուսափի, և որուն հետ ի սպաս խզել կը վճռէ:

Զօրավար Ասատուրօֆ որ զօլիցինեան հակահայ ուժերին  
հետեւանով բանակէն հեռացած է, պատերազմին առթիւ գործօն  
ծառայութիւն ստանձնած է կովկասեան զօրարածնի մը մէջ, և  
յաջորդ առստուն սահմանագլուխ պիտի մեկնի: Այդ իրիկուն իր  
տան մտերիմները հրաւիրուած են սղջերթի ընթրիքի մը: — Սպա-  
սելով կօչնականներուն՝ Իշխանուհի Սօնիա և իր բուզիւնը՝ Պր. Զա-  
րուհի Սուվարեանց, ճաշարահ կը մտնեն և կ'ունենան խօսակ-  
ցութիւն մը, որուն ընթացքին կը պարզուի Սօնիային ամբողջ  
հոգեկան տաքնապն ու յեղաշրջումը:

Զարուհի Սուվարեանց լռակեաց ու ջերմեանդ խառնուածք  
մըն է, բնա՛ւ պչրասէր, ուստահայ ուսանողուհիի տիպար մը: Իր  
նշանածը, Սահակ Արամօֆ, Մօսքուայի համալսարանը ձգած և  
կովկաս եկած է Քեռիի խումբին մէջ իրբեւ կամաւոր մօտ օրէն  
Հայաստան մեկնելու համար: Սահակ քիչ յետոյ պիտի մասնակցի  
սեղանին: Զօրավար Ասատուրօֆ Զարուհիին ու Սահակին նկատ-  
մամբ մասնաւոր համակրութիւն մը կը տածէ:

Զարուհի Սուվարեանց մտադրած է կամաւորի աննական տա-  
րազին տակ ծագուած Քեռիի խումբէն ներս սարգիլ և իր նշա-  
նածին հետեւիլ: Բայց այս յանգուզն առաջադրութեան մէջ յա-  
ջողելու համար պարտաւորուած է ամենքը խարհելու, նոյն իսկ իր  
Սահակը: Կ'ըսէ ամենուն թէ Զուիցերիա պիտի մեկնի, երաժշ-  
տութեամբ զբաղելու և արուեստին մէջ մտնելու համար իր խօս-  
նայրին վտանգաւոր հեռացումը: Զարուհի տկարութիւն, յուսա-  
հատութիւն կը կեղծէ, և ոչ ոք կը կռահէ իր հնարքը:

Հիւրերը կուգան և իշխանուհի Սօնիա ճաշարահին մէջ  
կ'ընդունի զանոնք: Նոյն իրիկունը, իշխանուհիին խնդրանքին  
վրայ, բանաստեղծ Թելուսեանց, Զօրավար Ասատուրօֆի սրտա-  
կից բարեկամը, իր հետ բերած է նշանաւոր գործիչ ու հռետոր  
Տօքթ. Արա Հախումօֆը, որուն մէկ զգայացունց ատենախօսու-  
թեան ներկայ եղած է Սօնիա, շարաթ մը առաջ, Արդիստիկական  
Թատրոնին մէջ, և որուն անձէն ու պերճախօսութենէն հմայուած,  
մաքնիսացած է: — Տաւը տարի առաջ, Հախումօֆ, Պաքուի հայ-  
թաթարական սարսափին, Սօնիան — որ պատահմամբ իր ալգա-  
կան մեծահարուստ Աթապէկներուն հիւր կը գտնուէր հոն — ալա-

277-26





ատճ և ողջամբ Տփղիս բերած էր: Այն ատեն Հախումօֆ, գործիչի իր ասպարէզը նոր սկսած անձանօթ երիտասարդ մը, Արտասահման պատասանիլ ստիպուած, ուստօթուրք պատերազմի պայթումին կովկաս վերադարձած է իբրև մտաւորական հսկայ մը:

Հիւրերը — որոնց մէջ է նաեւ նկարիչ Ազարեանց — կը բուրուին սեղանին շուրջը: Իշխանուհի Սօնիա Ղազարգիւ անտարբերութիւն մը կը

չեչտէ իր նախկին սիրահարին հանդէպ, իսկ բուռն շահագրգռութիւն մը ցոյց կուտայ Հախումօֆին նկատմամբ զոր իր ձախ կողմը կը նստեցնէ: Զօրավար Ասատուրօֆ տեղեկութիւններ կը խնդրէ Հախումօֆէն հայ կաւաւորական շարժումին մասին: Գործիչը գոհացում կուտայ Զօրավարին ու ներկաներուն հետաքրքրութեանը: Բանաստեղծ Թեւումեանց կը ձայնակցի իրեն, և խանդավառ նօթը կը դնէ սեղանին շուրջը: Բաժակաճառերու, կենացներու և հուր-



Օր. ՆՈՒԱՐԿԻ (Զարուհի Սուլվարեանց)

րաներու շարքի մը մէջ՝ պատերազմի առաջին օրերուն ամբողջ կովկասահայ խռովքն ու ոգեւորութիւնը կը պատկերանան բեմին վրայ:

Կոչնականներու մեկնած միջոցին, Իշխանուհի Սօնիա այնպէս մը կը շարժի որ Հախումօֆ ամենէն վերջը կարևոյ իրմէ հրատեչտ առնել: Այն ատեն հատկապէս, բայց ստիպողական խօսքերով կը թախանձէ անոր՝ յաջորդ օրն իսկ այցելել իրեն՝ իրիկնադէմի թէյի պահուն: Գործիչը նախ կը ջանայ խուսափիլ՝ առարկերով թէ




տարապայմանօրէն զբաղած է, բայց իշխանուհիին յամառ, գրեթէ հրամայական պնդումներուն վրայ՝ կը խոստանայ գտնուիլ տըրուած ժամադրութեան: Սօնիա, յաղթական, Հախուժօֆը դուրս ելլելուն պէս, կը դառնայ թիկնաթողի մը վրայ կը նետուի՝ ըսելով. «Վերջապէ՛ս կը նշմարեմ եւքը...»: Իշխանը ներս կը մտնէ և Սօնիային կը հաղորդէ որ յաջորդ առտու ժամը 10 ի գնացքով Տփղիսէն կը մեկնի: Իշխանուհին կը պատասխանէ թէ այդ ժամէն առաջ կայարանը կը գտնուի իր գտարիկին՝ Աստղիկի հետ: Իրարու բարի-գիշեր կը մաղթեն, ցրտօրէն: Զօրավարը կը քաշուի իր առանձնասենեակը: Սօնիա կը մնայ պահ մը ըրվիկին առջև: Ազատինը՝ Նունիկ ներս կուգայ և նամակ մը կը յանձնէ Սօնիային «Նկարիչը տուաւ» ըսելով: Իշխանուհին զայրագին սոքի կ'ելլէ նամակը ճմռթիկելով ձեռքերուն մէջ, յետոյ գայն բանալ կարգալէ ետքը, կը պատռէ ու կտորուանքը կրակին մէջ կը նետէ, ու բուպէ մը գիւլային նայուածք մը սեւեռելով բոցերուն՝ դէմքին վրայ տարօրինակ ժպիտով մը կը դառնայ Նունիկին և կը հրամայէ իր ննջասենեակը գալ զինք հանուեցնելու, և տիրական քայլերով դուրս կ'ելլէ:

#### ՆԵՐՈՐԿ ԱՐԱՐՈՒՍՈՒ

Տեսարանը կը ներկայացնէ իշխանուհի Աստղիկի սալօնը, փարթամօրէն կահաւորուած: Վարագոյրը բացուելուն՝ փոքրիկ Աստղիկը, գաշնակին առջև կանգնած, անվարժ մտաներով կը փորձէ հնչեցնել Անգրանիկի քայլերգին պարզ նօթերը: Առտուն, հայրիկը ճամբու տնէէն ետքը, կայարանէն մօրը հետ տուն վերադարձած միջոցին՝ հանդիպելու են կամաւորական թափօրներու սրնք այդ երգը գտաւէն կ'երթային, և հիմա Աստղիկ կ'ուզէ սորվիլ «Անգրանիկը քաջ»ը: Խորքի դռնէն մայրը ներս կը մտնէ մըտազբաղ: Աստղիկ գայն կը կանչէ, և կը խնդրէ որ երգէ: Սօնիա, խանդադատած, չի գիտադրեր իր աղջկան թախանձանքին: Կ'երգէ ու կը յուզուի: Այդ միջոցին ազատինը կուգայ այցաքարտ մը մատուցանել իշխանուհիին: Սօնիա սոքի կ'ելլէ ջրագրգիւ: Աստղիկը կը յանձնէ Նունիկին՝ որպէսզի Սուվարեանինց տունը տանի, Զարուհիին մեկնման առթիւ: Հազիւ Աստղիկ ու Նունիկ դուրս ելած են, Սօնիա ազատինը կը կանչէ, և կ'ըսէ որ պատրաստ է նոյնհետայն ընդունելու այցելուն: Պահ մը վերջը նկարիչ Արշակ Ազարեանց ներս կը մտնէ, այլալլած, ընկճուած: Սօնիա, որ հազիւ դադրած է անոր մասին իր խորշանքը մենախօսելէ, գայն կ'ընդունի դաժան պաղուծեամբ մը: Երկու նախկին սիրահարներուն միջև տեղի կ'ունենայ խօսքի հուսկ մաքառում



մը: Նկարիչը խելայեղօրէն կը կառչի Սօնիային, վերջին անգամ մըն ալ կը փորձէ գայն սողօքել, անոր տարփանքը վերնուածել: Բայց իզուր: Իշխանուհին անոր երեսին կը զարնէ կռուիլ չուզելու վատութիւնը, անոր դասալքութիւնը, անողբօրէն կը հեզնէ անոր չքմեղանքները: Յանկարծ գուրսէն անպնայտօրէն հաւանքով մը աղմուկը կը փրթի: Հայ կամաւորներու թափօր մըն է որ Սօլօլաքի փողօցներէն կ'անցնի՝ «Չայնը Հնչեց»ը երգելով և հուռածներ արձակելով... Սօնիա վարագոյրը վեր կ'առնէ և գուրս կը նայի հիացումի ու յափշտակութեան ճառագոյթող նայուածքներով: Ապա Ազարեանցին գառնալով՝ կ'ըսէ. «Անոնք անա՛ կը պատասխանեն ձեզի... կամաւորնե՛րն են ևն. ևն.»: Նկարիչը, սահմակած, կը հառաչէ. «Անոնք երջանկութեանս զագանղը կը տանին. ևն.»: Բայց՝ Սօնիայի անգրգուելի կեցումքին ու ապրումներէր խօսքերուն անակոխալի ազգեցութեան տակ՝ Ազարեանց յասանատօրէն կը համակերպի և կը շապէ կամաւորներու հետացող շարքերուն հասնիլ, խառնուիլ: Իշխանուհին գայն կը ճամբէ քաղցրութեամբ. «Գնա՛, կուրն աւելի գորաւոր է քան կիւնը... Անիկա ա՛յլապէս պիտի երջանկացնէ քեզի...»:



Փոքրիկն Օր. Ս. Փափազեան  
(Աւսդիկ)

Իրիկնագէտի թէյի պահն է: Հաստ մօֆ, իր խոտուամը պահելով, կուգայ իշխանուհիին այցելելու: Սօնիա քնքօրէն կ'ընդգիմանայ գործիչին, որ իրեն կը թելագրէ կուրն օժանդակ ձեռնարկներուն բերել իր ընկերային բարձր գիրքին ու անձնական հմայքին սատարը: Իշխանուհին այդպիսի գործունէութիւնէն չի հրապուրուիր, այդքանը չի բուեր իր ամենի խառնուածքին. կ'ուզէ կուրն հետ, անոր կողքն ի վեր, տիրականօրէն փայլիլ. ինքզինքը մղուած կը զգայ ճամբիտ գոհողութիւններու, խիզախութիւններու: Կը փորձուի փողօց իջնել, ամբօխներուն խառնուիլ: Հաստ մօֆ կը զգուշացնէ զինք այդ ճամբուն մէջ իրեն սպասող հիասթափութիւններէն: «Փողօցը, կ'ըսէ, միշտ բան մը կը պահէ իր ցեխէն ևն.»: Վերջապէս, տեսնելով որ անկարելի է իշխանուհին ետ կեցնել իր յանդուգն առաջադրութիւններէն, կը թելադրէ անոր կարմիր-Պաչի ծառայութեան մէջ փրկուել իր տարտամօրէն հետապնդած բարոյական գոհացումը: Սօնիա



կը հմայուելի վերաւոր կտրիճներ դարմանելու, անոնց տառապանքին հսկելու, զանոնք ամօքելու, սրտապնդելու դերէն, և Հախումօֆէն կը խնդրէ իրեն ընկերանալ դէպի սահմանազուխ՝ կարմիր-նաչի դարմանատար կայանի մը մէջ իբրեւ հիւանդապահուհի գործելու համար: Տօքթօրը նախ կը ջանայ խուսափիլ այդ ուղեկցութենէն որ պիտի կրնար կասկածաւոր մեկնութիւններու գուռ բանալ. բայց՝ Սօնիայի ստիպումներուն վրայ՝ կը համաձայնի: Խօսակցութեան ընթացքին՝ Հախումօֆ, հեզուտ խանդապատու մով մը, կ'ըսէ թէ իրեն վիճակուած ըլլալ կը թուի՝ այդ պատմական օրերուն՝ թողա՞տու, գրեթէ մեղսակից դատնալ Հայուհիներու հերոսական գաւերուն, թէ՛ նոյն իրիկօ՛ւնն իսկ՝ Ազգային Բնութի շրջափակին մէջ՝ դիմագրաւուեր է անձանօթուհիէ մը որ իրմէ յանձնարարական քարտ մը կը խնդրէր կամաւոր ընդունուելու համար, ինքզինք ներկայացնելով իբր թէ Լօռիէն եկած սմն Տիրան Լալունի: Գործիչը հարիւր առ հարիւր վատահ է թէ Տփղիսցի օրիորդ մը ըլլալու է այդ անձանօթուհին, որուն «կեղծ պե. խերը կը հայհոյէին դէմքին ու մարմնոյն իզական բնորոշ վափկութիւններուն հետ»: Սօնիա՝ նախանձաւորդ՝ կը գոչէ. «Ո՞վ է արդեօք...»: Հախումօֆ հրաժեշտ կ'առնէ իշխանուհիէն՝ երթալ պահ մը մտամոխիփուելու նոյն իրիկուան կատարելիք բանախօսութեան համար: Սօնիա շնորհապարտ խօսքերով զայն ճամբու կը դնէ, և իր կոչումին ուղին գտած հողի մը ներքին հրճուանքովը խայտալով, պահ մը յետոյ իրեն մնաք. բարովի եկող Սահակ Արամօֆը յանկարծակիի կը բերէ, անոր ըսելով. «Մենք թերեւս կը հանդիպինք իրարու տակաւին...»: — Ո՞ր...»: — «Սահմանազխին վրայ... Եւ դո՛ւք կը տեսէք իշխանուհի Ասատուրօֆը կարմիր-նաչի կամաւորուհիի ձիւնասպիտակ համազգեստին տակ...»:

#### ՆՐՐՈՐԿ. ԱՐԱՐՈՒՄՆ

Տեսարանը կը ներկայացնէ, սահմանազխին վրայ, կարմիր-նաչի հիւանդանոց մը: Ռազմադաշտէն բերուած վերաւոր «օսմանցի» հայ զինուորներ պառկած են առաջին մահիճներուն մէջ: Անոնցմէ մին կը զառանցէ տենդահար: Ուրիշ մը խղճի-խայթի ու անդոհի խօսքեր կ'ընէ: Սօնիա, հիւանդապահուհիի կտրմիր. խաչակիր տարազին տակ, կը հասնի ամենուն, քաղցր բառ մը, քրոջական ժպիտ մը, գուրգուրտ խնամք մը կ'ընծայէ իւրաքանչիւրին: Պատգարակի վրայ վերաւոր մը ներս կը բերուի, Գեռիի խումբէն կամաւոր մը, որ Սօնիայի հոգածութեան առարկայ կ'ըլլայ ինչպէս միւսները: Հիւանդանոցին ներքին կեանքը, իր սրտա-



չարժ մանրամասնութիւններովը կը պատկերանայ այս տեսարանին մէջ:

Յանկարծ կուգայ Տօքթ. Հախումօֆը, ճամբորդի զգեստով: Սօնիա կը դիմաւորէ զայն, և մեկուսի վրդովալի խօսակցութիւն մը կ'ունենան: Գործիչը Տփղիսէն կանչուած է հեռագրով: Բայց ան գիտէ թէ վը-

տանգուած է սահմանագլխի կայանը, ուր կը գտնուի կարմիր-նաչի հիւանդանոցը, և պարտք կը սեպէ ազգարարել Սօնիան՝ խորհուրդ տալով անոր որ հեռանայ անկէ առժամապէս, մինչև որ նահանջի մէջ երկրորդ բանակը օգնական ուժեր քստանայ և վանէ թշնամին: Սօնիա չանսար այս թիւաբանութիւնը, և կը նախընտրէ մնալ իր վերաւորներուն և հիւանդապահներուն հետ՝ կարմիր-նաչի բարոյական պաշտպանութեան տակ:



Օ. ՎՈՒԹԷՐ (Տօքթ. Արա Հախումօֆ, Գործիչը)

Այս խօսակցութեան միջոցին, մէկէն, կնոջական ձայնով մը արձակուած օգնութեան ճիչեր կը լսուին, և պատգարակի վրայ ներս կը բերուի վերաւոր մը, զգայազիրի, որուն ձեռքէն բռնած է կամաւորի զգեստով հերարձակ աղջիկ մը: Զարուհին է, իսկ վերաւորը՝ Սահակը: Սօնիա և Զարուհի իրարու կը փաթթուին խելայեղօրէն: Հախումօֆ կը փութայ Սահակին շուայելու բժշկական անհրաժեշտ խնամքները, և զայն տակաւ ուղքի կը բերէ: Սօնիա և Հախու-



մօֆ ընկեր Լալունիի (Զարուհին) պատմել կուտան իր ոգիսականը ֆեռիի խումբին մէջ որ ծուղակի բռնուած և մեծ կորուստ ունեցած է Բասենի գաշտում... Զարուհի կը խոստովանի այն ամբողջ խարէութիւնները զորս գործ դրած է իր դաւը յաջողցնելու համար: Սահակը ինքզինքին հազիւ եկած, իր նշանածը կը գտնէ անարին քով, և պահ մը կը կարծէ երազել .. Հախումօֆ ու Սօնիա, խանդադատած կը նային գիւցազնական սիրահարներուն, սրտնք իրարու կը միացնեն իրենց:

Հրթները: « Կարմիր համբոյրն է առիկա, կ'ըսէ գործիչը, ինչ հրաշալի նիւթ սխամանթօյական քերթուածիմը »  
« Երջանկութեան ինչ գերագոյն նըուածում », կը հառաչէ Սօնիա: Եւ ձգելով Զարուհին Սահակի մահիճին քովն ի վեր, գարծեալ կը մեկուսանան սեղանի մը շուրջը: Հախումօֆ կացութեան վտանգները կը մտանանչէ, ջանալով համոզել իշխանուհին դէպի Ալեքսանդրաբօլ, Երեւան կամ այլուր փոխադրուիլ և առան մը սպասարկել Կարմիր-Պաչի



ՎԱՀՐԱՄ ԿԻՒՐՃԵԱՆ  
(ԹԵԼԵՈՒՄԵԱՆԵ ԵՆ ՖՈՏ ՇԱՖԵՆ)

ապահով հաստատութիւններու մէջ, քանի որ թրքօ գերմանները ընդունակ են ամէն անօրէնութեան:

Այս յուզումնալից խօսակցութեան մէջ աւելի զգալի կ'ըլլայ չի խոստովանուած սիրոյ փոխադարձ խորունկ զգացումը որ կայ գործիչին եւ իշխանուհիին միջեւ, տարփանք մը՝ որուն զոհողութեան կանխաւ յանձնառու եղած են լռելեայն, երկուքն ալ, անոր խօսքն իսկ ընելէ զրկելով ինքզինքնին ու գիրար:



Հախումօֆ, տեսնելով որ Սօնիան անդրդուելի կը մնայ, հրա-  
ժեշտ կ'առնէ անկէ՝ խոստանալով անոր Տփղիս անպայման այցելել  
իրեննեբուն, համարել Աստղիկը և պատմել անոր թէ «ի՛նչ կտրիճ  
մայր ունի»... Սօնիա կը փղձկի... Հախումօֆ զայն սրտապնդելով՝  
կ'ըսէ. «Ծս ամենքը կը ստիպեմ բաժնելու ձեր մասին իմ հիւ-  
ցումս»... Իշխանուհին ինքզինքը զսպելով քաջարի կեցուածք մը  
կ'առնէ, մինչ Հախումօֆ կը մեկնի, «Յաղթանակին հետ վերա-  
դառնալու» համար։— Զարուհիին ու Սօնիային միջեւ խօսակցու-  
թեամբ մը կը վերջանայ այս երրորդ արարուածը :

### ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒՄԾ

Տեսարանը, դարձեալ սահմանագլխին վրայ կարմիր-Խաչի  
հիւանդանոցն է,  
այս անգամ կէս-  
մութի մէջ, թրքո-  
զերմանները եկած  
գրաւած են կայանը :  
Վիրաւորները անձ-  
կոտ հարցումներ  
կ'ընեն Սօնիային,  
որ կը հանդարտեցնէ  
զանոնք յուսալից  
խօսքերով : Զարու-  
հի կարմիր-Խաչի  
հիւանդապահուհի է  
հիմա, Սօնիային  
հետ :

Գուրսէն ստնա-  
ձայն մը կը լսուի,  
քարշ տրուող սուրի  
չաչիւնի մը հետ :  
Գերման սպայ Փօն  
Շաֆէնն է որ կու  
գայ իր բիրտ դար-  
պանն ընել Սօնիա-  
յին, որուն գեղեց-  
կութենէն համազը-  
րաւուած է, և զոր  
չաբաթէ մը ի վեր ի զուր կը հետապնդէ, արգիլելով իր թուրք



ԹԱԹՈՒՎ ՏԵՐ-ԱՆՆԴՐԷԱՍԵԱՆ  
(Նկարիչ Արեակ Ագարեանց)



ստորագրաները մօտենալէ՝ իրեն միայն վերապահուած այդ չքնադ որսին: Այսպէսով հիւանդանոցը զերծ կը մնայ ուրիշ ու եւ է անսխորժ սոսնձգութեանէ:

Սօնիա աշխարհիկ ու պըրոտ կնոջ իր բոլոր հնարքները գործ կը դնէ Գերմանացին en respect պահելու եւ միանգամայն, տարօրինակ համարձակութեամբ մը, անոր երեսին կուտայ ամբողջ ամօթն ու խաղքութիւնը զերմանութիւրք հրէշաւոր եղբայրակցութեան:

Փօն Շաֆէն կը հանգուրժէ այս կեցուածքը՝ սիրաշահելու համար հայ գեղեցկուհին: Բայց երբ կ'անդրադառնայ որ անոր նուաճումը քաղցրութեամբ կարելի չէ, երբ մանաւանդ կը տեղեկանայ, թէ թուրք նահանջը մտալուտ է, կը սկսի ժանիքները ցոյց տալ և սպառնական դառնալ: Փօն Շաֆէն եկած է վերջին անգամ բլլալով սղգարարել Սօնիան, որ եթէ կէսգիշերին իր առանձնասենեակը չի գայ, յաջորդ օրը «դէպի Հայաստան փոքրիկ ուխտագնացութեան մը հաճոյքը» պիտի ընծայէ անոր... «Կարմիր-Խաչին բաւական ծառայեցիք, կ'ըսէ, քիչ մըն ալ Կարմիր-Մահիկին ծառայելու պիտի երթաք» ... Սօնիա վարպետութեամբ կը խլէ Գերմանացիին բերնէն, թէ ուուս բանակը՝ զօրացած՝ Թուրքերը նահանջի մատնելու վրայ է, և թէ վայրկեանէ վայրկեան կայանը պարպելու հրամանին կը սպասուի ... Իշխանուհին հոգեկան միտտիք բորբոքումի մը անձնատուր՝ ա՛լ չի մտածեր իր որդեգրած զոհողութեան ճամբէն ետ դառնալու, ինքզինքը զերծ պահելու վտանգէն, և օր մը վերագառնալու իր




ՍԵՒՐԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ  
(Զօրավար Իշխան Բագարուս Ասասուրօ)

Փօն Շաֆէն եկած է վերջին անգամ բլլալով սղգարարել Սօնիան, որ եթէ կէսգիշերին իր առանձնասենեակը չի գայ, յաջորդ օրը «դէպի Հայաստան փոքրիկ ուխտագնացութեան մը հաճոյքը» պիտի ընծայէ անոր... «Կարմիր-Խաչին բաւական ծառայեցիք, կ'ըսէ, քիչ մըն ալ Կարմիր-Մահիկին ծառայելու պիտի երթաք» ... Սօնիա վարպետութեամբ կը խլէ Գերմանացիին բերնէն, թէ ուուս բանակը՝ զօրացած՝ Թուրքերը նահանջի մատնելու վրայ է, և թէ վայրկեանէ վայրկեան կայանը պարպելու հրամանին կը սպասուի ... Իշխանուհին հոգեկան միտտիք բորբոքումի մը անձնատուր՝ ա՛լ չի մտածեր իր որդեգրած զոհողութեան ճամբէն ետ դառնալու, ինքզինքը զերծ պահելու վտանգէն, և օր մը վերագառնալու իր



երբեմնի ունայն կենցաղին, իր «քուրջերուն, Տփղլաի սալօններուն, ընկերային կեղծիքին» ... Անիկա ահաւոր գաղափարը յղացած է գերման գնտապետը խտրելու, անոր ձեռքէն խլելու թուրք սպայակոյտին գաղանի բլանները, ի հարկին մինչեւ ոճիր եւ մինչեւ մահ խիզարխելով... Այս դաւադրութեան մէջ յաջողելու համար պէտք եղած եղերա կատակեր գութիւնը խաղալու յանձնապատասան վատահութիւնն ունի ... Փօն Շաֆէն դուրս ելլելէն յետոյ, կը պատրաստուի ի գործ գնելու իր գաժան ծրագիրը... Զարուհի կը կռահէ թէ Սօնիան վտանգաւոր քայլ մը առնելու վրայ է, և կը թախանձէ անոր ետ կենալ ... Աղետարչ խօսակցութիւն մը տեղի կ'ունենայ երկու զարմուհիներուն միջև ... «Մեղքքի՛ր գեղեցկութեանդ» ... — «Գեղեցկութիւն բե՛ռ մըն է ալլիս ինձի համար» ... , «Մեղքքի՛ր Աստղիկին» ... — «Մի՛ տանջեր զիս ... դո՛ւն կ'ըլլաս Աստղիկին մայրը» ... Աւ Սօնիա՛ գաշոյն մը կուրծքը գնելով՝ «Մինչև ծայրը պիտի երթամ», կ'ըսէ, ու լոյսը մարելով դուրս կ'ելլէ, մինչ Զարուհի մութին մէջ կը հեւայ. «Աստուած իմ...» :



Ա. ԱՐԱՄՕՅ (Սահակ ԱրամօՅ)

### ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Տեսարանը լուսաւորուելով կը պարզէ Փօն-Շաֆէնի առանձնասենեակը: Գերման գնդապետը, գրասեղանի մը առջև, գինի կոնծելու և թղթապնակը խառնելու զբաղած է՝ երբ Սօնիա՛ մութ գոյն վերարկուի մը մէջ փաթթուած կը ներկայանայ զրան սեմին մօտ: Հոն սպասող պահակը, հազիւ գայն կեցուցած, կը լսէ Փօն Շաֆէնի ձայնը, որ կը հրամայէ իրեն հեռանալ: Սօնիա ներս կը մտնէ, և իր պչրանքներով, իր զգլխիչ ձեւերով ու հնարամիտ հրապուրան-



քովը, կը թուլէ, կը կարկամեցնէ, կը գինովցնէ վաւաչտ Գերմաներ, որ իշխանուհիին մէջ զիւրին որս մը կարծեր է տեսնել: Սօնիա ապագայ տեւական երանութիւններու պատրանքը կը շողացնէ Գնդապետին պղտոր ու կարմրած աչքերուն: «Երբ դուք մեր սահմաններուն վրայ պարտուիք, գուցէ ես ձեր անձնական յաղթանակը եղած պիտի ըլլամ... Խմէ՛նք...»: Բայց գինիով ու մոլուցքով բորբոքած Գերմանին մէջ գազանը գլուխ կը վերցնէ դարձեալ... Ժամանակն անցած է ... Ծօն-Շաֆէն կը փորձէ փարիլ իր ցանկացած ու ձեռք անցուցած Հայուհիին... Սօնիա սրտի տկարութեան նուազ մը կը կեղծէ, ու Գնդապետը ետ մղելով՝ քիչ մը ջուր կը խնդրէ անկէ: Ծօն-Շաֆէն կը փութայ, բայց՝ հազիւ կըռնակը դարձուցած է՝ երբ Սօնիա թղթապանակը գրասեղանին մէկ գզրոցէն խլելով վերարկուին գրպանը կը մխրձէ, և կուրծքէն դաշոյնը հանելով աջ թեւոցին մէջ կը բռնէ՝ ինքզինքն անով պաշտպանելու կազմ ու պատրաստ .. Ճիշտ այդ րոպէին, մօտակայ զօրանոցէն, շեփոր մը կը հնչէ՝ անմիջական նահանջի ազդանշանը տալով միևնոյն ատեն դուրը կը զարնուի ստիպողաբար. Ծօն-Շաֆէն՝ անէժք կարգալով իր բաղդին՝ կ'աճապարէ ճամբու դնել Սօնիան, խոտանալով անոր պատերազմի վազորդայնին անպայման Տփղիս գալ զայն գտնելու... Հայուհին դուրս եր սահի գիշերին մէջ՝ իրեն հետ տանելով Գնդապետին տփլումները:

Ծօն-Շաֆէն կ'ընդունի թուրք սպան որ եկած է իրեն հազորդել նահանջի հրամանը, Պահակին կը հրամայէ իր պայուսակը կապել, և ինք գրասեղանին գզրոցներէն իր թուղթերը կը փութայ վերցնել: Բայց նոյնհետայն հաստատելով իր թղթապանակին կորուստը՝ մոլեգնած՝ կը հրամայէ ամէն կողմ մարդ վազցնել և բռնել պահ մը առաջ իր սենեակէն դուրս ելլող կիներ: Թուրք սպան ու պահակը դուրս կը շտապեն: Գնդապետը կատաղօրէն կը հայնոյէ. «Պէ՛տք է լողալ Հայուն արիւնին մէջ, պէ՛տք է բնաջինջ ընել անիծուած ցեղը»... Դուրսէն ազմուկը կը շտանայ ... Պահակագօրքը արգէն նահանջած է, և Ռուսերը կայանը վերադարձած: Գերմանացին պայուսակը կը վերցնէ և դուրս կ'ելլէ, բայց՝ հազիւ քանի մը քայլ առած՝ կը վերադառնայ .. Երկու ուս պինուորներ ներս կը մտնեն, կը ձերբակալեն զինքը, և լոյսը մարելով՝ կ'առնեն կը տանին իրենց բարձրաստիճան գերին:

#### ԵՐԿՐՈՐԿ ՊԱՏԿԵՐ

Տեսարանը լուսաւորուելով կը պարզէ դարձեալ կարմիր. Խաչի հիւանդանոցը: Հիւանդապահները վիրաւորներուն կ'աւետեն Յաղթանակը... Յանկարծ ոգեւորութիւնը սուգի կը փոխուի՝ երբ մէկը



կը գուժէ թէ Իշխանուհի Սօնիան մահացու կերպով վերաւոր ինկած է հերոսական արարքի մը հետեւանքով... Վերաւորները կ'ողբան իրենց պահապան հրեշտակը .. Պատգարակի վրայ ներս կը բերին Սօնիան, որուն ետեւէն կը հասնի Հախումօֆ, յաղթական բանակին հետ սահմանագլուխ վերադարձած... Իշխանուհին օրհասական այդ գերագոյն վայրկեանին, գործիչին կը խոստովանի իր սէրը և կը մեռնի Աստղիկին անունը շրթներուն վրայ :

Ձանց կ'ընենք աւելի մանրամասնօրէն ամփոփել այս վերջին պատկերը, զոր այնքան կուռ տողերով խտացուցած է մեր երիտասարդ բարեկամն Արսէն-Երկաթ, իր յետագայ սրտոտ յօդուածին մէջ :

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ



## ՎԻՅՏ ՈՒ ԱՐՈՒԵԱՍ

(«ՁԱՅՆՐ ԼՆՁԵՅ...» ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆԻ)

Ոսկեվառ լոյս մը ծառերուն տերեւոյթը կ'ողողէ : Նազելաշարժ արմաւենիներուն ամպհովանիին տակ առուակ մը կը սողսկի օձապտոյտ, բոսորակեղ զանակներով ծածկուած, հանդարտ, անշըջուկ, կարծես վախնալով . իրիկնային լուսթեանը մէջ : Անուշ է սոսափը սագարթներուն, երբ արեւը հրածեշտ կուտայ մեր դիպուածակերտ երկրին, ուրիշ աշխարհներ լուսաւորելու համար, երբ ձերունին Ֆէպիւս կը մեռնի քիչ առ քիչ, ինչպէս ամէն բան տիեզերքին մէջ, ու տակաւին իր հրեղէն աչքը կայծեր կը ցայտեցնէ փունջ առ փունջ : Կենսացնցուղ պայծառութեամբ մը : Այս միայնակ անկիւնը փնտռեցի, ստանին ժխտրէն ու կեանքին խելացնոր միօրինակ գոհուրոհէն հեռու : Յաճախ կուգամ հոս, գիրք մը ընկեր կ'ըլլայ ինձի, որովհետեւ չեմ հաւատար մարդերու բարեկամութեան, ու կ'ապաւինիմ երազին և ստուերին մէջ... Այսօր ուրիշ գիրք մ'ունիմ : Ծունկերուս վրայ կը բանամ, ազնուպաշտօրէն, նոր երկասիրութիւնը «Քայքայում» ի հեղինակին, ձեռագիր տետրակի մը մէջ՝ որուն էջերէն հոգիս կը շնչէ զգլխիչ բուրմունք մը խունկի և արիւնի : Կը մտածեմ վշտին և արուեստին վրայ, ամէն անգամ որ հայ ճշմարիտ գրագէտին սիրտը կը գտնեմ հատորի մը ծալքին տակ :



Տեսակ մը վարանք ու ջերմեռանդ զգացում մը կը համակեն զիս, երբ կ'ուզեմ գրել անոր մասին: Ինչո՞ւ համար: Չեմ գիտեր: Թերեւս, որովհետեւ տակաւին երիտասարդ եմ, երազկոտ, կեանքին անգիտակ, և ան արդէն իսկ տիրացած է փառքին, ու բառերուն գեղեցկագոյն ու ժը կ'ապրի անոր ցաւագին հոգիին մէջ: Անոր դաժան ճակատագիրն եղաւ միշտ ցեղին սիրտը թափել, կտորած բաժակի մը պէս, արիւնայորդ, կտոր մը թուղթի վրայ: Սուրէն Պարթեւեանին ամբողջ գրականութիւնը ցեղն է որ կը պատկերացնէ իր անգոհներուն, իր ցաւերուն, իր երազներուն, իր յոյսերուն, թշուառութեան և ընդվզումին մէջ: Տառապանքէն փրցուած էջեր են բոլոր անոնք՝ որոնց կըռայթը վիրաւոր արծիւներու խելոկորոյտ թեւթափ մըն է պիտի ընէիր և արդէն քերթողական մըրկատրոփ խանդ մը կը կածկլտայ հոն, հնոցի մը բոցափառ կրակովը: Ես տեսած եմ լացը շատերուն որոնց կարգացած եմ «Սայքօ»ն, Հայուհին, իր վրիժագեղ հոգիին ատելութեամբը ծառայած, գիտախել: Եւ արդէն երբ գրագէտ մը իր ընթերցողները կը լացնէ, մեծ է ան, կրնայ սրտերու հետ գարծ ունենալ, մեծ կիրքեր ներշնչել, ապրիլ դարերուն մէջ, մեհեանի մը պէս՝ որուն գափիրին առջեւ կուգան ծնրագրիւ ու մխիթարուիլ բոլոր անոնք որ կը տանջուին, բոլոր անոնք որ կը տուայտին, բոլոր հայ ցեղը արիւնտտ կողերով ...:

Պերճանք մը չէ գրականութիւնը, երբ անիկա թաթխուած է վշտին մէջ, և երբե՛ք հայ գրականութիւնը պերճանք մը չէ եղած, ո՛չ մէկ ատեն, ո՛չ մէկ դարուն: Ես չեմ ուզեր ոգեկոչել բոլոր այն մեծ ստուերները որոնք խորհրդաւոր ու մահագեղ ազնուութեամբ մը կ'երեւին աչքերուս: Ինչո՞ւ համար կանչել զանոնք լուսեթեան և ստուերին մէջէն, երբ արդէն կեանքը միայն երազ մըն է, և անոնց հանգիստը՝ երազէն աւելի գեղեցիկ ու յաւերժական ... Ինչո՞ւ համար կանչել Բաֆֆին ... Ինչո՞ւ համար կանչել Ալիշանը՝ որ Ազրիականի ավուներին վրայ մխաց, մխաց ու հատա՛ւ, բուրվառներու խունկին պէս, բանաստեղծութեան ու վշտին մէջ, սիրազեղ և անուշ հոգիի մը թռիչքովն երկնասլացիկ: Ո՛չ, հազար անգամ ո՛չ, գրականութիւնը պերճանք մը չէ եղած մեզի համար: «Մենք, որ արիւնտտ որ մը չունեցանք, արիւնին ճամբան եղաւ մերինը ... Ատեն չի կար գրիչը թաթխելու գինիին մէջ, ատեն չի կար ցնծուհիներու հետ պարելու, երգելու, գինովնալու ... Ծագիկներն իսկ արիւն կը բուրէին մեզի համար և երկնքին աստղերը կարմրած էին վէրքերու պէս ... Մեր օրբոցները գիշերին մէջ պատանքուած, զարգարուած քանի մը կապոյտ ուլունքներով, ցաւին կաթովը գիեցան, ու մեր վրայ սեւ



բու մը երկարօրէն իր թեւերը բաղխեց ... Մենք տառապանքին սերունդն եղանք, աստուծոյ պէս խենթեցած ...» Այսպէս կ'ըսեն ինծի բոլոր անոնք որ երեկէն մինչեւ այսօր հայ միաքը ներկայացուցին, հայ մտքին թռիչքն եղան, անոր կարեւիքը կոթողացումը:

Քայց կ'երկարին հեազհեաէ ստուերները ծառերուն, կը խառնուին իրարու մտերիմ ու խանգակարօտ հոգիներու պէս՝ որոնց շշուշը, քիչ յետոյ, նորածագ աստղերը պիտի լսեն: — Կը լիշեմ կորսուած ընկեր մը որ ինծի հետ կուգար հոս, տարիներ առաջ: Մեր երկուքին սրտերը միացած էին իրարու սիրոյ շղթայով, ան կը կարգար «եղիչէ»ն, և

«Աչներ բո՛ց կ'առնէին ...»

Որովհետեւ եղիչէն ցեղին երգիչն էր, «Աւարայրին պլպուլը քաղցրազրուցիկ», ինչպէս ըսած է Նահապետը: Եթէ քովս ըլլայիր այս պահուս, կորսուած ու տարաբաղգ ընկերս, պիտի տեսնէիր որ իմ աչքերս ալ բո՛ց կ'առնէին, արցունքին բոցը որ սրտի առկայծ բոց մըն է, սպեղանիի նման քաղցր ու խնկարոյր:

«Ձայնը Հնչե՛ց» ին վերջին էջն է որ կը կարգամ: Ա՛հ, ցաւազի՛ր օրէն հետեւեցայ Սօնիայի քայլերուն միջեւ հոն ուր ինկած է ան վիրաւոր, ու մահուան գեղեցիկ ժպիտը կը խորունկնայ, կը պայծառանայ իր անուշ աչքերուն մէջ, ու կարծես իր տժգոյն շրթները կ'ըսեն Արա Հախուսօֆին.

«Տե՛ս, զիա՛րդ գեղեցկացոյց զիս մահ, արար զիս սարվիլի ..»

Այո՛, սէրը կը գեղեցկացնէ աւելի արդէն գեղեցիկ հոգիները, ու

«Սերն է որ մահը կ'ընէ ռա՛ս գեղեցիկ ...»

Թատերախաղին ամբողջ հոգին է ան, Սօնիան, կին մը լոկ, սալօններու պուպրիկը, թաւիչներու, մետաքսներու, ժանեակներու տարփուհին, մինչև այն ատեն, երբ կուիւր կը պայթի ու մարգիկ մեռնելու կ'երթան պատերազմի դաշտին վրայ, մեռնելու կ'երթան բոլոր հայ ազգքը սեւ դէմքերով, այլ կարմիր սիրտերով վրէժով գեղեցկացած ... Սօնիան Հայ կի՛նն է կուիւին մէջ, նման անոնց որոնք Եգեթիոյ աւերակներուն տակ քնացան հրացաններու հետ գրկուած, դաշոյններ սեղմած իրենց ձեռքերուն մէջ ... Հայ կի՛նն է ան որուն «Սիրտը ամբո՛ղջ ու ժամակ է», պայթելու մօտ, ամբողջ ուժ, ամբողջ սէր ու գեղեցկութիւն ... Ան քալեց «մինչև ծա՛յրը», անվեհեր, ու փնտռեց խեղալը որուն կ'ուզէր հասնիլ, երազեց, իր անձնութեան ճամբուն վրայ, երջանիկ ըլլալ անոր հետ որուն կապուած կը զգար իր կնոջական սիրտը երջանկազոյն ճակատագրի մը համար ...



ՍՕՆԻԱ

Ես միևսկ չեի՛... Դուն իմ հե՛su էիր ... ( Հեւասպառ ) Ես կը սիրէի՛՝ քեզի ...

ՀԱՆՈՒՄՕՅ

Թո՛ղ աշխարհին անձանօք մնայ մեր սերը, Սօնիա՛...

Գեղեցիկ իմաստութիւնը ... Այո՛, աշխարհէն հեռու ապրել, երազներու հետ ու չի տենջալ երբեք, չի փնտռել երբեք ինչ որ կայ մեր սրտէն դուրս. մեզմէ դուրս ամէն բան ունայնութիւն է...

ՀԱՆՈՒՄՕՅ

Այսպէս աւելի հօգօր ու յաւիտեանական պիտի ըլլայ ան, մեզ կապելով, հոգեխառնելով՝ մարդկային սկարուքիւններէն, ետական ու վաղանցուկ վայելքներէն վեր՛, անձնագոհութեան վեւմ ոլորտներուն մեջ ...

Ի՞նչ բան աւելի գեղեցիկ է կեանքին մէջ՝ որքան մեռնի՛լ երիտասարդ, ու մեռնիլ ուրիշներուն համար՝ Հայրենիքի խորանին առջեւ ... Բայց Սօնիա չուզէր մեռնիլ .

ՍՕՆԻԱ

Համբուրե՛ գիս, Արա՛... Անգամ մը եւս, աւելի՛ ուժգին ... Մի՛ քողուր որ մեռնիմ ... Երկարէ՛ երջանկութեան այս վայրկեանը ...

« Մի՛ թողուր որ մեռնիմ » .. Ըսէ՛ք ինձի, եթէ այս աղաչանքը բոլոր Հայաստանին ձայնը չէ իր գաւկըներուն, ըսէ՛ք ինձի, եթէ ան չի գար հեռուէն, արիւնի ճամբաներէն, մեր սիրտերը խըռովելու, ըսելու մեզի հեծկտապին . « Մի՛ թողուք որ մեռնիմ, անգամ՝ մը եւս, աւելի՛ ուժգին, ձեր կրակէ համբոյրը տուէ՛ք ինձի .. » :


Արեւին հրագոռնալ թաղուեցաւ հորիզոնին մէջ, արմաւենիները ծածկուեցան ստուերով : Ծուռկերուս վրայ կը փակեմ ձեռագիր հատորը : Պէտք է վերագառնալ ստանին, կեանքի դոհուրտին, պէտք է նորէն խառնուիլ անոնց ... Ա՛հ, ըլլար վայրկեան մը գոնէ, մարդերուն հոգին գեղձանէր արուեստը, ու վարդահեղեղ գեղեցկութիւն մը անոր արձանը շլացնէր ... Այն ստան երջանկութիւն պիտի ըլլար իսկ

« Տանջանքի մեջ՝ դեռասի,

« Ասուածներուն ձօնել քնար մը ոսկի ... »

Կ'անցնիմ յամրաքայլ ծառերուն տակ՝ որոնք իրենց տերէնները կը թափեն մագերուս մէջ ... Դեռ կարենայի՛՝ երազել ... Ու պահ մը միտքս կ'իջնան յանկարծ Եգիպտոսի շաղկապարձ հայրութիւնը, ու մեծ գրագէտը զոր ունինք մեր մէջ, ու կ'ըսեմ վերջինին իմ սրտիս խորանէն, տիրութեամբ համակուած . « Ծա՛տ իսկ է ինչ որ կ'ընես դուն բոլոր անոնց որոնք պիտի գան քեզի լսելու : Բայց վիշտն ու Արուեստը պսակած են քու հոգիդ, ու գալիք օրերուն, Հայկաւանի փողոցներէն, խուճառ առ խուճառ, ուրիշներ պիտի փութան լսելու քու ձայնդ՝ որ միշտ եղաւ ցեղին, ձայնը, ամբողջ զսպուած մրրիկ, ամբողջ հեծկտանք ... »

ԱՐՄԱՆ-ԵՐԿԱՅ



277-80





ՈՂԲԱՑԵԱԼ ՏԻԿԻՆ ԷԼՊԻՍ ՍԻՄՈՆԵԱՆ







## Վ Ա Խ ...

Երբէք Մանն ա՛յնքան վայրագօրէն տրտապեցած չէր Կեանքին որ-  
քան այս եղբերական օրերուն՝ երբ վայրկեանէ վայրկեան բիւրաւոր  
երիտասարդ արեւներ կը մարին բռնահար: Եւ սակայն դեռ անկա-  
րող կը զգանք համակերպելու ահաւոր Հնձողին անագորոյն քնահա-  
նոյքներուն՝ երբ ան մեր քովէն, մեր մեջէն կ'առնէ կը քանի շան-  
կարծ այնպիսի եակներ որոնք իրենց շուրջ հմայք ու համակրութիւն  
սփռեր էին:

Չոհնուրեան, փառքի, հերոսութեան շառափէն զուրկ, հիւան-  
դի իրենց անկողնէն գահավիժօրէն ու անվերադարձ այդ մեկնողնե-  
րուն ետեւէն աւելի՛ մարդկայնօրէն կը համակուրիմք մահուան ան-  
դոններովը՝ քան երբ ըսուեր թէ հեռաւոր հորիզոն մը գերեզման  
դարձեր է ամբողջ դիւցազնական լեգեոններու ...

Եւ թո՛ղ շատ չի տեսնուի մեզի մեկու մը կամ մեկ քանիներու  
համար մեր այս աղի արցունքը՝ երբ սուզը պատեր, բռներ է, ան-  
դին, արար-աշխարհ, երբ ամբողջ ցեղը Գողգոթաներն ի վեր կը  
փաշկոսուի կոշկոսմամբ ... Մա՛րդ ենք, սկա՛ր ենք, կաւե՛ մըն ենք  
որ կը կոտորայ ...

Ազնեամբարիայէն կը գրեմ այս տղերքը, նստած ոչ շատ հեռու  
այն հուսկ հանգրուանէն, ուր հեզ Տիկիին Սիմոնեան գնաց յարիտեան  
հանգչելու:

Գուցէ խորհեցաւ թէ Մարմինան շատ մօտիկ պիտի ըլլար իր բա-  
րեկամներուն, եւ հոն իր անյարիր ներկայութիւնը աւելի՛ խոռովիչ  
ու երկարատեւ յանախամք մը պիտի սպառնար մեզի, եւ խորհրդա-  
պահութեամբ մը որ զինք այնքան յանկուցիչ կերպով յասկանեց մեր  
մեջ, Տիկիին Սիմոնեան նախընտրեց մեկուսի Մազարիքան, «այլէ հե-  
ռու» բաղուիլ մնալու եւ խնայելու համար իրմով վշտահար սիրտերուն:

Գեղեցիկ բառեր չեմ փնտռեր, աւելցնելու համար այն չկնայ



աւաղանճներուն ու պերն ոգեկոչումներուն, որոնք ահա՛ կը ձօնուին հոս իր աղէխար յիշատակին:

Իր մտերմութեանը մէջ ապրելու բազմը շի տուեցաւ ինձի. հազիւ տասնեակ մը հանդիպումներ իր ներկայութեան քաղցրութիւնը նանչցուցին ինձի: Բայց անիկա կարօտալիք հեւք մը կը բերէր ինձի հեռաւոր ու ալեհեր մայրիկիս զիրկեն, մայրիկիս՝ որուն խանդակաք գուրգուրանքին առարկայ եղեր էր Գասք-Գիւլի հայրենի տան մէջ, իբրեւ փոքրիկ սիրասուն դրացուհի ... Ու այսօրն քո՛ղ բաւէ, որպէսզի ներուի ինձի իր տակաւին քարմ յիշատակին ուղղելու եղբայրական խեղճուկ այլ արտաբուրդիս հառաչանք մը .

— Վ.ա՛խ, հուրի՛կ ... :

ՍՈՒՐԷՆ ՊԼՐՔԵՆԵԱՆ



## Ի ՎԱՂԱՄԵՌԻԿՆ ՏԻԿԻՆ Է. ՍԻՄՈՆԵԱՆ

Ասեմ զի, մինչ ընդ հողով, ի խորափիտն անդ մըքին,  
Ըզմեռելոյ ուրում՝ ձեռք մանկանացուաց՝ քալեն զդին,  
Անդէն եւ անդ, Անեղին Աջ, եղկելեաց խնամասար,  
Ժողովէ զբունչ եւ զհոգի նորա յերկնիցն ի դադար.  
Եւ մինչ մարմին եւ ոսկեք նորուն յերկրի աս սըխեղծ  
Ի պիղծ տարերս լուծանին յանիւն դասեալ եւ յօդ զեղծ,  
Վերաքեւեալն ի յերկինս նորայն հոգի, յանքերին  
Դիպեալ անդէն ի վրնիս Արդարութեանքն վերին,  
Եքէ իցէ չար՝ փոխեալ յատուպ՝ գլորի յերկնից վայր,  
Եքէ բարի՝ նախ առեալ ցանց ընդ կապոյտ ծիրն անձայր,  
Ըմպէ զնանանչս Գերարփւոյն, եւ յերկնային կամարի,  
Յանձամանդալ կայսն անհուն, կարգի յասեղցն համարի:



\*  
\* \*

Տեսի՞լ մըսաց եքե իղձֆ ծնանին յիս արդ, գիտեմ ոչ.  
Այլ հաւասամ զի մինչ այժմ ի սքսմասուներն ի տեղուոչ.  
Հանգչի մարմին քո, նրբաւ խուն աստուր կենաց բոց,  
Ո՛վ կին բարի, ո՛ն, հոգի քո, յոր ամբիժ Սիրոյն բոց  
Եւ Հաւասոցն հուր անտէջ արժարձեցին զՅուսոյն խանդ,  
Յոր գեղեցիկն արուեստից աշխոյժք եւ յոյզք անմըկանդ  
Ըզբարս քաղցունս ի վարս հեզս եղին, որպէս ի հուր զխունկ,  
Այո՛, հոգի քո, որում կայան երկնի՛ցն են բարձունք,  
Աս՛ող անաղօս, գեղափայլ, յեռեալ ի բոյլսրն Քնարին,  
Զլուսաբբբրին ձօնե գնուագս առ մրօսընջեա՛նքն Բարին :

\*  
\* \*

Յո՛ւտ քեզ սպա, Հոգեա՛կ քաղցր, աղէտք եւ վիտ, սուգ եւ կոժ,  
Յոր քաւալին աստե՛ն սիրտք բնաւից եղբարց եւ քերց բոց.  
Յաւերակացն անդ միջի, ի Հայրենիս նուիրական,  
Ե՛ն դեռ ծաղկունք, ե՛ն մանկունք, յոյս մեր համայն, բիբք ական.  
Հիւսեա՛ զնոցայն ողբս ի նուագ քո, հասո՛ յունկն Անմահին,  
Կալցի՛ զնոքոք գոնեայ գուր, կորիցե՞ Ազգ մեր բնաւին ...  
Ո՛ն, յորժամ որբեղ այդոքիկ, վերաբուսիկք յիւրեանց սան,  
Տեսցեն կանգնեալ միւսանգամ զարտաւիցն Հայասան,  
Յայնժամ եւ քոյդ սաս ի սան քում զաւակունք՝ զանձկայրեաց  
Սիրոյդ ըզուզ սուգեայեն ի խինդ անմահ Հայրենեաց:

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ





## Ապաժամ Մայրամուտ Մը

Վախճաններ կան որ արեգակնային խաւարումներու կը նմանին: Բնութիւնը կը սմքի, սահմակած, երբ տիեզերքի աստղին փայլը յեղակարծ սկսի նսեմանալ: Թռչունները, վերջալոյս կարծեւրով, բայց անհասկնալի կերպով տարաժամ վերջալոյս մը, բաներ մը կը շնչեն իրարու: Տերեւները հով չեղած տանը՝ կ'երերան, իբրեւ թէ սարսափի նորօրինակ շունչ մը անցնէր իրենց վրայէն: Մթնոլորտը իրերու կատարածի դալկահար սարսուռով մը կը լեցուի: Անտառներուն շիկերէները՝ մօտալուս աղէտքի մը ժամանուամը կարծես հեռագգալով՝ բաշերնին թօթափելով կը մռշտան, անհանգիստ: Եղերական բան մը կ'անցնի երկնակապոյտին մէջ. գողցես ստատկուծի փոթորկի մը երագ երագ գալուստէն վրդովէր: Մարդկային արարածը վախճանելու մօտեցած ընդհանրական կեանքին անգունդի մը եզերքին մօտենալուն մահասարսուռ տպաւորութենէն կը դողդոջայ: Միտքը չարագէտ կերպով անձանօթ կործանարար ձեռքի մը սպառնալիքը կ'երեւակայէ ... Կ'երեւակայէ թէ Աստուած մոռցեր է ստեղծողի ու կենդանարարի իր պաշտօնը, և հեռու տեղ մը գացեր է գուցէ ալ չվերադառնալու համար:

Ողբացեալ Տիկին է. Սիմօնեանի յաւիտենական մեկնումն ալ այդ վախճաններէն մէկն եղաւ:

Այդ նորահասակ արուեստագիտուհին, որուն հաղորդութիւնը քանի մը տարիներէ ի վեր շլացուց ու գրաւեց բազմաթիւ բարեկամներ ու ծանօթներ, որ գեղարուեստական երեկոյթներու և գրական շինիչ ու բարոյացուցիչ հանդէսներու մէջ, հոգիները գմայլեցնելու, սիրտերը ազնուացնելու և միտքերը դէպի գեղեցիկին տեսլականը յափշտակելու գործին մէջ այնչափ կարեւոր ու աղբոր բաժին մը ունեցաւ, իր մատղաջ եղկելի որբակներուն հետ, շատ մը հոգեւոր որբեր ալ կը թողու, զանոնք որ իր գրաւիչ արուեստին հմայքները ճաշակեցին և որ կը յուսահատին մտածելով որ այլեւս չպիտի տեսնան զինքը, գաշնամուրին առջև նստած, գիտուն շուշան ճապուկ մատուրները ստեղնաչարին վրայ պտըացնելով և դստաստեցնելով, սքանչելի ճարտարներուն հոգիէն



ծնած զմայլարար և հոգեպարար մրմունջները վարպետութեամբ թարգմանելով, արուեստին հայթայթած մխիթարութիւններուն և սլացքներուն օծումովը լուանալով ունկնդիրներուն սիւսքն ու կուրծքը:

Նուագարանը լուց. ներշնչարանը մեռաւ. երկինք տանող եւ լանելիքը կործանեցաւ. յոյսը, էլպիս, խորտակեցաւ ինկաւ, թեւերը թօթափած հրեշտակ:

Արգա՞րիւ ան որուն յոյս էր անունը, էլպիս, տառապեալ իր ազգակիցներուն Անմահին կողմէն զրկուած ժպտուն հրեշտակը, ալ չկա՞յ: Չենք հաւատար: Չենք ուզեր ու չենք կրնար հաւատալ որ ան ոչ եւս է:

Մարդ չի կրնար յոյսին մեռնելուն հաւատալ. յոյսը անմահ բաներու բնութիւնը ունենալ կը թուի: Ան մեր ամենուս յոյսն էր, ու յոյսն էր արուեստին: Եւ յոյսն էր անոր որ կեանքի մէջ ճամբու ընկեր ընտրեց զինքը, իր դժբախտ լծակցին: Յոյսն էր իր զաւակներուն, նորարդութիւն ծագիկներ զոր իր ձեռքը պիտի խնամէր ու մշակէր: Մեր խաւարներուն մէջ, մեր դժոխքներուն մէջ, մեր յոյսն էր, զի կը խորհէինք որ, թերեւս մեր զարհուրելի ձմեռին յաջորդելիք գարունին մէջ, աչքք առածին չափ երկար շարք մը պիտի ունենայինք փրկութեան ու ազատ կեանքի ընձեռած սխրալի հանդիսութեանց, որոնց մէջ, ուրիշներու հետ՝ ինքն ալ պիտի փայլէր արուեստին գլխութիւններովը զմեզ կախարդելու բարերար գործին մէջ:

Ուստի, հակառակ որ դաւաճան զողի մը պէս օրհասը, ոտուըներուն մատներուն վրայ կոխելով, յեղակարծ կուգայ մեզմէ խելի կորզել զանի, չենք ուզեր, չենք կրնար հաւատալ որ ան ոչ եւս է:

Ամէն անգամ որ կապոյտին նայինք, անոր նայուածքին քաղցրութիւնը պիտի ընդնշմարենք: Ամեն անգամ որ բնութեան ծոցին մէջ հովին ու հաւին սօսաւիւնը և երգը պիտի լսենք, պիտի կարծենք ունկնդրել անոր հեշտալուր և սրտազրաւ նուագներուն: Ամեն անգամ որ պարտէզներու մէջ պտոյտներու ատեն ձիւնածագիկներու կամ շուշաններու պիտի հանդիպինք, անոնց մաքրափայլ կաթին մէջ պիտի կարծենք հաստատել անոր հեզահամբոյր և սրտազուարճ կերպարանին երեւումը:

Յ. ՍԵԹԵԱՆ





# ԷԼՊԻՍ ՍԻՍՈՆԵԱՆ

## ԻՆՉՊԷՍ ՃԱՆՉՑԱՅ ԶԻՆՔ

Son visage était angélique dans la mort; j'ai pleuré à genoux devant elle, j'ai pleuré amèrement, et cependant je sentais que son âme sans péché était délivrée, et, revêtue d'une splendeur virginale, planait au dessus de moi et de son beau visage, dont les yeux étaient doucement entrouverts comme dans le sommeil des bienheureux. Pourquoi donc ai-je tant pleuré? Ah! c'est qu'elle ne m'entendait plus et qu'il me fallait garder dans mon cœur tout ce que je lui aurais dit.

ALFRED DE VIGNY

(Journal d'un Poète)

1913ի սկիզբն էր: Ազգային Սրահի դռները, առաջին անգամն ըլլալով, կը բացուէին բարեկամներու սեղմ շրջանակի մը առջև: Պ. Պետրոս Յովսէփեան ուզեր էր այդ հաճելի անակնկալն ընծայել, հաստատութեան «պաշտօնական» բացումէն առաջ, քանի մը համակիրներու:

Ամբողջ Սրահը, երեկտրական լոյսերու տակ սրողուած, կը պսպղար իր շքեղութեամբը: Ներկաները, շնորհաւորելէ յետոյ հաստատութեան հիմնադիրը, ինձմէ կը խնդրէին «գաշնակը փորձելու» համեստ գերն ստանձնել:

Քեմին վրայ ինձ կը յաջորդէր սպիտակափայլ արկին մը՝ հուրի աննման աչքերով: Ու նուագարանը կը թրթօար, կ'երգէր շնորհալի գաշնակահարուհիին ճկուն մատներուն տակ, Լիսթի հունգարական Տրդ Բաբստիին հաճելի խաղերը սփռելով Սրահին մէջ: Այդ երեկոյ մեղմէ շատերուն համար կատարեալ յայտնութիւն մը կ'ըլլար Տիկին Սիմոնեան:

Իսպարի մը պահուն, բարեկամներէս մին զիս կը ներկայացընէր արուեստադիտուհիին և՛ մեր երկուքին ուզղելով խօսքը՝ կ'ըսէր. «Դուք, Տիկիններ, ձեր արուեստին շնորհիւ, զիրար լատ պիտի հասկնաք. պէտք է որ մտերմանաք իրարու:»

Ծանօթացումէս քանի մը օր վերջ այցելութիւնը կ'ընդունէի Տիկին Սիմոնեանին, զոր առաջին հպումէս խկ կը սիրէի, տես-



նելով իւր մէջ մին այն սխալի էականէն որոնց նմաններուն գուն ուրեք կը հանդիպինք մեր կեանքի ընթացքին: Անիկայ օժտուած էր ճշմարիտ արուեստագէտի հոգիով մը որ գիտէ գեղեցկութեան առջեւ խանդավառուիլ: Իր գրաւիչ աչքերուն մէջ կը կարգայի գուրգուրոտ և զգայուն սրտի մը բարութիւնն ու անկեղծութիւնը. անսագիւտ գանձ մը՝ այդ սիրտը, որուն շողակնի անարատութիւնը շնորհած էր կարծես Արարիչը:

Մեր յարաբերութիւններն հեազհեաէ աւելի կը սերտանային. շարաթ չէր անցներ որ գիրար չի տեսնէինք և իրարու չի հագորդէինք երաժշտական այս կամ այն հեղինակութեան մեր վրայ թողած ապուսրութիւնը: Թատերական ներկայացումներու և նուագահանդէսներու գրեթէ միշտ ներկայ կ'ըլլայինք, միասին վայելելու, միասին ուսումնասիրելու համար թատերախաղը կամ երաժշտական կտորը:

Ինձ համար հազուադէպ բախտ մըն էր յանձին աշխուատիրաբարեկամուհիս գանել նրաճաշակ երաժիշտ մը, որ քմահաճոյքներու չուզեր զոհել արուեստը, և որ կ'աշխատի, ինքզինքը կը վառնէ անոր հոգեպարար գեղեցկութիւնը ճանչցնելու համար ամբոխին: Պալիս՝ Հեկէլին աշակերտած, իսկ Պրիւսէլ հանրաճանօթ Արթիւր Տըկրէֆին զասընթացքին հետեւած, Տիկին Սիմոնեան հմուտ էր դաշնակի դասական երաժշտութեան, ինչպէս նաև վարժ՝ արդիականին: Իր բաց և արթուն միտքը, իր համբերատար ու յարատեւոյ նկարագիրը զինք կը մղէին երաժշտական դժուարին ու կնճատ հեղինակութեանց ուսումնասիրութեան: Իր բուռն, թէեւ աւելի յարմար երաժշտական զգայուն կտորներու թարգմանութեան, կտրիճօրէն կը տանէր սակայն դասականին պարտազրամ նուագելակերպը: Կը բաւէր որ քանի մը անգամ կարգար ու է նօթագրութիւն, կարենայ արտայայտելու համար ճշգրիտ անոր ամենանրբին նիւանները:

Մեր քառաձեռնի և զոյգ դաշնակի ուսումնասիրութեանց ընթացքին՝ հաճոյքով կը նշմարէի բարեկամուհիս խանդավառութիւնը գեղեցիկ պարբերութեան մը կամ դաշնակութեան մը իլուր: Սլու երաժշտութիւնը, զոր սիրցուցած էի իրեն, հմայուած կը լսէր և կը յափշտակուէր: Պօրօտինի մը Իօխան Իկօրին, Կեդրոնական Ասիոյ սափասաններուն մեջին, կամ Տիօրչաքի մը Նոր Աօխարհի Աեմօսիին հոգեցունց մեղեդին ու ինքնատիպ ներդաշնակութիւնը նոր և պայծառ հորիզոն մը կը բանային իր առջեւ, տակաւ ծանօթացնելու համար իրեն սուս և չիս սերիչ հանճարեղ վարպետներու, Ռիմիսքի-Քօրսաքօվներու, Չայքովսքիներու, Ռահմանինօվներու, Սմէթանաներու զմայելի գլուխ-



գործոցները :

Բարենպաստակ ձեռնարկներու ի նպաստ սարքուած հանդէսներուն մեր մասնակցութիւնը մեզ առիթը կ'ընծայէր աւելի ստէպ յամենալու դաշնակիին գիմաց : Մեր փորձերէն վերջ, բարեկամուհիս կը ստիպէր զիս «իրեն համար» նուագել Սէն-Սանսէն, Սեզար Ֆրանքէն, Տրպիւսսիէն, Տ'Էնտիէն, և երկիւղածօրէն կ'ունկնդէր ժամերով Ֆրանսական դպրոցին այդ հանճարեղ պետերուն հեղինակութեանց :

Սրտի յուզումով կը յիշեմ Ամերիքըն Միշլընի մէջ Յունիս 17ին Հ. Ե. Ք. ի սարքած նուագահանդէսը, որուն համար Տիկին Սիմոնեան պիտի փութար զալ Աղեքսանդրիայէն, վերջին անգամ մըն ալ, ափսոս, իր արուեստագէտի տաղանդն ի սպաս զնելու որբախնամ գործին : Այդ երեկոյթին պիտի նուագէինք, ինք դաշնակի վրայ և ես երգեհոնի, Վիտորի Չրդ Տուօն և Վակնէրի Լօհէնկրիսին Հարսանեաց Բայլերգը :

Հարսանեաց Բայլերգ ... Բայց ինձ կը թուի թէ տարաբախտ բարեկամուհիս մահուան ողբերգն էր որ հնչեցուցինք այդ գիշեր միասին ... :

ԱՅՅՎԱՆՈՅՇ ՊԱՆԵԱՆ

## Ճառագայթի Մը Մահը (\*)

Այսօր ճառագայթ մը մեռաւ յանձին ծագիտտի և լուսերանդ Տիկին Սիմոնեանի :

Անոր յեղակարծ մեկնումը՝ մայրամուտին յաջորդող խաւարին նման խոր թախիծ մը և գիշերին ցուրտին նմանող սրսփանք մը կը պտտցնէ մեր բովանդակ էութեանը մէջ :

Ճառագայթը փայլեցաւ քսան եւ եօթը գարուններ միայն, և այսօր անդարձ կը մեկնի, իր ետին թողելով գորովագութ մայր մը, երեք լուսածղի շառաւիղներ և անոնց անմխիթար հայրը :

Կեանքի դառնութիւններուն առջեւ սփոփ մը, զովարար շունչ

(\*) Այս արտայայտ դամբանականն արսասանուած է ողբացեալ Տիկին Սիմոնեանի վրայ, ՓրօՖ. Յ. Թ. Գայաեանի կողմէ, Յունիս 12 ին, Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս-Պետրոս Եկեղեցւոյն մէջ, յանուն Եգիպտացի Գրական եւ Գեղարուեստական Միութեան :



մը կ'զգանք երբ յանկարծ անոր փշալից ու տաժանոտ գերբուկներուն վրայ հանդիպինք Աստուծոյ ժպիտը բիւրեղացնող էակի մը : Այս սակաւաթիւ էակներէն մէկը եղաւ շնորհալին Տիկին Սիմոնեան :

Քայց, կը հարցնենք իւրովի, շուարած ու թաղծահար, ինչո՞ւ կեանքին հեղինակը շատ կը տեսնէ մեզի ցանցստաթիւ մարդակերպ հրեշտակներ. միթէ հրեշտակի սո՞վ կայ երկինքը :

Չէ՞ որ մեզ կեանքին կապողը սիրական հոգիի մը, կամ քանի մը սիրելիներու կապը միայն եղած է միշտ : Ու երբ այդ կապը խզուի՝ փլուզում մը կ'զգանք մեր հոգիներուն մէջ և իզձ մը՝ մեր սիրելիներուն հետ մեկնած ըլլալու՝ այլ եւս ամայի, անհրապոյր այս կենցաղէն :

Եւ արդարեւ մահը, որուն իշխանութեան սահմաններուն մէջ կը գտնուի Տիկին Սիմոնեան, այսօր, ապահովաբար, ոչ միայն իր պատուական ամուսինին, այլ շատերուն աչքին աւելի գեղեցիկ, աւելի հրապուրելի կ'երեւի քան կեանքը : «Ուր գանձք ձեր՝ անդ և սիրտ ձեր :»

Շատ բնական է որ հանգուցեալին մահուան պատճառած կրկնիծ ըլլար այնքան խոր՝ որքան եղած էր անոր անձէն ճառագայթող շնորհքին տղայսրութիւնը ղինքը ճանցողներուն վրայ : Եւ Գահիրէի մէջ ո՞ր Հայ չի ճանչցաւ Տիկին Սիմոնեանը. Բարեգործական ուէէ ձեռնարկ, գեղարուեստական ուէէ երեկոյթ, զարգացողական ուէէ հուաքոյթ, կատարեալ ըլլալու համար, անհրաժեշտօրէն կրելու էր այս աննման պարիկին շնորհքին դրոշմը :

Իր տունը, բարեկամ գահլիճներ, հանրային սրահներ՝ երկար, շատ երկար ատեն պիտի սղրան ճառագայթին մահը, պարիկին անհետացումը, հրեշտակին գաղթումը : Եւ փոշիներուն հետ միասին ու փոշիներէն աւելի թանձր թախիժ մը պիտի թառի իր դաշնակին վրայ, որ երկար տարիներ թարգմանը հանդիսացաւ անոր թրթռուն և սկանակիտ հոգիին. պիտի թառի չորս պատերուն վրայ, որոնք անոր կենսաչող ժպիտին ու քրքիջին, երգին ու նուագին առջեւ ապրեցան, սարսուպին, երջանկացան :

Հանգուցեալին կեանքի արշալոյսին դրուագները մեզի անձանօթ են առ այժմ. մենք Նեղոսի ափերուն վրայ հանդիպեցանք անոր՝ ինչպէս ուսճացած ծաղիկ մը՝ գեղով ու շնորհքով զգեստաւորուած, ինչպէս կատարելութեան հասած արեւի մը՝ իր փառքին ու բարութեան մէջ երջանիկ :

Եւ արդարեւ մանուշակօրէն սահող իր կեանքին մէջ Տիկին Սիմոնեան՝ ուր սր երթար՝ իր հետ գարուն մը կը տանէր, ուր որ եւեւէր՝ կենսայորդ ճառագայթներու ողողում մը կը յայտնագործուէր : Գահիրէի հայ գաղութին երբեմն տափակ ու անապա-



տային կեանքին ծաղկելը, ճառագայթը, ուլասիւր եղաւ հանգուցեալ ազնիւ Տիկինը :

Ձինքը բոլոր ճանչցողները պիտի միահամուռ վկայեն թէ անի կեանքը կը սիրէր՝ ինչպէս իր դաշնակը . և անոր արուեստագէտի մեղանոյշ աչքերուն առջեւ կեանք ու դաշնակ գեղարուեստի միջոցներ էին, որոնցմով կարելի էր բարձրագոյն կեանքը ապրիլ ու ապրեցնել, երջանկանալ ու երջանկացնել : Շատերը այսօր անդրադառնալով պիտի ուզին ձեզի ըսել թէ անոր ամէն սէկ խօսակցութիւնը, շարժումնքը, երեւոյթը, ժպիտը, նայուածքը՝ նուագի ու նկարի ճանախարհիկ համադրութիւն մը, գեղարուեստի բիւրեղացում մըն էր պարզապէս . ուրիշ բառով՝ կեանքը անոր ճարտար ձեռքերուն մէջ երանգօպնակ մըն էր կամ քնար մը, արտագրելու համար իր հոգիին մէկ նկարը կամ նուագը, որ անպայման սահմանուած պիտի ըլլար զինքը չըջապատողներուն մէջ երանութիւն մը ջրվէժելու :

Այսօր այդ բոլոր գեղեցկութիւնէն, կեանքի գեղարուեստէն, երանութեան ճառագայթումներէն կը մնայ յիշատակի խուրձ մը՝ երկար ատենի համար շոգարձակ, նման ստաղերուն՝ որոնց լոյսը գեւ կը շարունակենք ատենել իրենց մահէն յետոյ իսկ :

Եւ սրբան խնկանոյշ ու լուսագեղ ու ներշնչող ու կապուորիչ ու բարերար պիտի ըլլայ յիշատակը այն վճիռ էակին, զոր պիտի սիրենք ոգեկոչել ամէն անգամ որ գեղեցկութեան գրոշմը կրող պատկերի մը կամ երեւոյթի մը առջեւ գտնուինք : Կարելի է ըսել թէ մահը մեր սիրելիները ոչ թէ կը յափշտակէ, այլ կը բազմապատկէ . անոնց հոգիները կարծես ատենուրեք կը դառնան . մութին մէջ, փողոցին անկիւնը, յանկարծ կը հանդիպին մեզի, աստղերուն ակնարկով կը ժպտին մեր հոգիներուն, մեզմ հովերուն թեւերով կը փայփայեն մեր ճակատները, ծաղիկներուն բոյրով ու թոյրով կը բարբառին մեզի, երգի մը շեշտով կը փոթորկեն մեր սիրտերը, կ'զգանք որ անոնք ամեն տեղ են, այլ մանաւանդ մեր սիրտերուն մէջ . և մենք կը յօժարինք, կը բողբոջենք կենդանի շիրիմները գառնալ անոնց գոգար յիշատակներուն :

Սիրելիի մը անդարձ մեկնումին պատճառած մորմօքին առջեւ ապալղեցիկ ու սնանկ կը մնան մեր այլապէս ճոխ լեզուազանձին բոլոր բառերն ու աստիճանները : Կաթիլ մը սփոփ հարկ ու կարելի է ստեղծել անոնց յիշատակին յաւերժացումովը : Եւ Գահրէի Հայութեան վերջուլումներուն ու ոգեկոչումներուն մէջ գեղեցկաբար և հպարտօրէն վերապրելու իրաւունքն ունի այն մարող ճառագայթը՝ որ Տիկին Սիրմանեան կոչուեցաւ :

Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ



## Գերեզմանի Ծաղիկներ

ՏԻԿԻՆ Է. ՍԻՄՈՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

### I

Խաչերուն վրայ կը խոնարհին ուռիներ  
Արսասուարոր, ու բաղեղներ ծաղկավառ  
Կը պրսակեն անոնց թեւերը խաւար ...  
Ներա՛նք, իրկունն է լրուօթի՛ւն եւ բսուե՛ր ...

Ներա՛նք, ինչո՞ւ կապուած ըլլալ այս կեանքին,  
Ուր ամեն բան նրազին սերն է պատիր,  
Չեռներդ այրած իմ ձեռներու մէջը դի՛ր,  
Որ չի խօսինք. ասդերն անա՛ կը ծագին ...

Լուռ գիշերն է, գերեզմաններ կ'արբրնան,  
Եւ օդին մէջ եղանակներ մակաբեան,  
Հեծկըխագին, բսուերին հետ, կ'արսասուեն ...

Յիշատակն է որուն բրնարն է կոտրած,  
Ու սակաւին մահուան մասները չորցած  
Անոր լաւերը վիբագեղ կը յուզեն ...

### II

Գերեզմաննո՛ց, գերեզմաննո՛ց, նրագի,  
Յիշատակի, Սիրոյ խորան աւերակ,  
Ծաղիկներուդ՝ որ կը բացուին զխրումակ,  
Անա՛ կու գամ իմ սրբիս հետ մեկուսի ...

Կ'ուզեմ պրսակ մը յօրինել անոնցմով  
Ներսասարդ նակասներուն որ ինկան  
Հրապոյթով մահուան կուրծքին մայրական,  
Ու գեղեցիկ՝ հոգեվարքին բսուերով ...



Անոց որ կեանքն երգերու մէջ սպրեցան,  
Գերեզմաններն օրօրոցնեք թո՛ղ ըլլան  
Մըրեննի ծաղիկներով զարդարուած,

Մարմարին վրայ թո՛ղ որ քննար մը ոսկի,  
Դափնիին հետ, ըլլայ փառփով փանդակուած,  
Յիշատակին ու Մահուան մէջ՝ դեռասի ...

III

Երբոր մեռար, երգերն հոգիդ օրեցիկն  
Վարդերուն մէջ պարտեզներուն հեռաւոր,  
Ուր կարապները պիտի գան ամէն օր  
Գերեզմանիդ փանդակագեղ մարմարին:

Ու պիտի լայ քեզի համար ուռենիին,  
Եւ աղբիւրներն առտւան մէջ՝ լուսաւոր,  
Նորէն քեզի պիտի կանչեն ամէն օր  
Երիտասարդ գեղեցկութեան երազին ...

Ճերմակ շիրիմդ պիտի զըրկէ վարդենիին,  
Ու կայծկըլսուն նառագայրներն առեւիկն  
Պիտի բերեն շուրջդ ոսկի մեղուններ ...

Եւ այն աստն պիտի արբըննաս երգելու,  
Դուն որ հոգին էիր զառնան բոյրերու,  
Ու քաղունիին կապուսաչուի, ոսկեներ ... :

ԱՐՄԷՆ-ԵՐԿԱԹ

ՍՊԻՏԱԿ ԴԱԳԱՂԻ ՄԸ ԵՏԵԻՆ...

Տիկին Էլպիս Սիմոնեանի յիշատակին

« Աժէն անգամ Մարմինա երթալուս նոր յուզում մը կ'ունեն-  
« նամ: Սովորութեանս համեմատ, երէկ դարձեալ գացեր էի հոն՝  
« օրհնել տալու համար կեսրոջս գերեզմանը որ վահրամ Սեթեանի-  
« նին մօտ կը գտնուի: Սիրտս սաստիկ բարբախեց այդ դեռ թարմ  
« հողակոյտին ի տես, և՛ վերյուշելով հօրը գրածները զաւելին հա-



«մար՝ արցունքս չի կրցայ զսպել: Այսուհետեւ երբ դերեզմանա-  
«տուն այցելեմ, իրեն համար ալ պիտի լամ: Այդքան երիտա-  
«սարդ՝ թող՛ւլ այս կեանքը ... Խեղճ աղայ. դժբախտ հայր ...  
«Հիմա ալ աւելի կը խանդադատիմ Սեթեանին վրայ ... :»

Այսպէս կ'ըսէիք ինձ, Չատկին երկրորդ օրը, հէ՛զ բարեկա-  
մուհիս:

Այդքան երիտասարդ՝ թող՛ւլ այս կեանքը ... Բայց որո՞ւ մըտ-  
քէն կ'անցնէր թէ դո՛ւք ալ, ս'վ սպնուական հոգի, արմատէն  
փրցուած ձիւնապիտակ շուշանի մը պէս պիտի խամրէիք յան-  
կարծ, ու ձեր հազիւ՝ քսանընթեք գարուններ բոլորած ցաւատանջ  
մարմինն յանձնէիք մահուան անողոք ճիրաններուն: Չի կրցաք  
անգամ մըն ալ արտասուել վաղամուտիկ վահրամին վրայ. այսու-  
հետեւ ձեր սիրելիներն ու մտերիմներն են որ, աւա՛ղ, պիտի դան  
լրենց դառն արցունքը խոռոնել ձեզ ծածկող սեւ հողին:

Ու հիմա կը հասկնամ թէ ինչո՛ւ յաճախ ձեր դէմքին վրայ  
կը նշմարէի ախրութեան դրոշմը: Նախազգացո՛ւմն ունեցած էիք  
ձեր դժբախտութեան: «Էլպիս, կ'ըսէիք ձեր կորսնցուցած մէկ բա-  
«րեկամուհիին համար, էլպիս ինձ տարեկից էր. միւսնայն թուա-  
«կանին ամուսնացած էինք երկուքս ալ: Ան ժամառանդէ մեռաւ.  
«կը վախճամ որ մեծագոյն թշնամիս ըլլայ այդ անաւոր հիւանդու-  
«թիւնը ... :»

Չեր ճշմարիտ արուեստագէտի խառնուածքը, սակայն, կը  
վանէր ձեր սրտէն ամէն յուսալքում: Չեր սիրելիներուն, մանա-  
ւանդ ձեր անդրանիկ զաւկին — սրուն կարօտովը կը մխայիք շա-  
րունակ — Պսիլս արգելափակման վիշտն երգել կուտայիք ձեր  
գաշնակին լարերուն: Կրիկի Դարուկը կը թրթռացնէիք, Վասփորի  
երանաւէտ ու կենսալիր ապագայ գարուններուն յոյսովը, և Մոս-  
կովսքիի Սիւրյ Վալսը կը հնչեցնէիք խանդաբորբ՝ ոգեկոչելով  
Պրիւսէլի մէջ անցուցած ձեր երջանիկ օրերը: Չեր մայրական  
սրտին աղէխարչ զարթնումները կը քնացնէիք, շատ անգամ,  
Կրիկի գողարիկ Որօրովը, մինչ Ծօրէնը՝ իր սրտայոյզ մահաքայ-  
լերգով՝ ձեր թախմալից աչքերէն կը հոսեցնէր արցունքի շիթեր ...

«Երաժշտութիւնը դիս անհունօրէն կը մխիթարէ», կ'ըսէիք,  
ստեղծարարին վրայ ձեր ճարտար ձեռքերը պտացնելով, և ձեր  
ունկնդիրները կը փոխադրէիք ժԼ. դարուն մէջ, Մօցարթին և  
Սկամպաթիին հանդարտ ու շնորհալից Մընիւէներուն շեշտերովը:

Քանի քանի անգամներ, ձեր բարեկամուհիին հետ կողք կող-  
քի նստած դաշնակին առջեւ, ձեր մտերիմներուն ըմբոյննել  
պիտի տայիք ստտուածալին ներդաշնակութիւնը մեծ վարպետ-  
ներու ստեղծագործած ամմահ երկերուն: Պէթհօվնի մը անհաւա-



սարելի Հինգերորդին սրտածմլիկ հառաչանքը, Մօցարթի մը զմայլելի Սօնարնհրուն քնքուշ մեղեդին, և կամ Մենալսօնի մը Ամառ գիշերի մը երազին հմայքը մեզ կը փոխանցէիք ձեր դիւթական մատներով, անբացատրելի խռովքի մը սարսուռներովը լեցնելով մեր հոգին :

Այս առղերը գրած պահուս աչքերս ակամայ կը յառին սենեակիս անկիւնը, ուր սգաւոր դաշնակը կը լռէ հիմա ... Անոր ծածկոցը դեռ չի բացուեցաւ՝ գէթ ողբալու համար ձեր անփոխարինելի կորուսաւ: Անոր մօտ ձեր տեղը թափուր պիտի մնայ իսպառ, ինչպէս մեր սրտերուն մէջ ձեր յիշատակն անջնջելի:

ԿԱՐՈ ՊԱՒԵԱՆ



## ՓՇՐՈՒԱԾ ՔՆԱՐԸ

Առ վաղամեռիկ Տիկին Էլպիս Սիմոնեան

Հայ գրական-գեղարուեստական պարբերականի մը հիմ գըրած օրդ, Պարոն Պարթեւեան, մտքէդ անցա՞ւ արդեօք թէ Անապատի Յուշարձանդ սահմանուած էր իրօք յուշարձան լինելու հայ տաղանդաւոր դաշնակահարուհիի մը, վաղամեռիկ Տիկին Էլպիս Սիմոնեանի, որ իր ոսկի սրտովը և հրեշտակ հոգիովը, փափուկ զգացումներովը և բարեմայն նկարագրովը գեղարուեստի գլուխգործոց մըն էր ինքնին՝ հայ իգական սեռին մէջ:

Այո՛, սիրտն էր ոսկի, անննգ, յստակ և անխառնուրդ: Հոգին էր հրեշտակ, անուշ, քաղցր, զուարթ ի բնէ, իսկ մերթ մռայլ՝ այլոց վշտովն և ազգին խոցերովն վրդովուած: Զգացումները փափուկ կը մղէին դինքն ծառայելու ամէն այլասիրական ձեռնարկներու և ազգային բեմին՝ հակառակ իր ֆիզիքական թոյլ կազմուածքին պարտադրած զգուշութիւններուն:

Եթէ ի տեսոյ կազմած զազափարս կամ քանի մը տեսակցութեանց առթիւ ստացած տպաւորութիւններս չի ստուգէի, չի հաստատէի նաեւ ի լրոյ՝ չի պիտի համարձակէի սոյն ձօնն ուղղել քու յիշատակիդ, վաղամեռիկ Էլպիս, որքան ալ ինքս անձնապէս գնահատած լինէի հոգեկան բարեմասնութիւններդ և դիւթական մատներուդ աննման ճարտարութիւնը: Այո՛, գովեստ և յարգանք գտայ շուրջդ, ամէն ընկերութեանց մէջ ուր գտնուեցայ. և ո՛չ մէկ բերան չի բացուեցաւ տարբեր բան մը խօսելու քու շուրջդ՝ Գահիրէի միջազգային խառնակ կեդրոնին մէջ ուր



նկատուած էիր դուն, ամուսին հաւատարիմ, կին ժրագլուխ, պսակ առն, դուստր ծնողատէր, մայր որդեաէր, պաշտող բարւոյն և գեղեցկին, սիրող ազգին, արգահատող թշուառին, մէկ խօսքով՝ պատիւ հայ իգական սեռին:

Այս ապաւարութիւնները հոգւոյ խորքը կրելով էր որ՝ երբ քանի մ'անգամ բախտն ունեցայ լսել նուագդ՝ Ազգ. Սրահին կամ Բրէնթանիայի բեմերէն, ուր քեզ հանգունատիպ որիչ պատուական հայուհի մը՝ Տիկին Հայկանոյշ Կ. Պալեանի հետ քով քովի նստած՝ քառածեան նուագածութեամբ մագական հմայք մը կուտայիք գաշնակին, եթերածին երկօրեակ մը կամ զոյգ մը հրեշտակներ կը կարծէի զձեզ. զի դուն ուրեք այնքան անուշ հնչած է գաշնակն իմ ականջներուս:

Բայց, աւա՛ղ, դուն ոչ եւս ես այսօր, եւ քու զուգակից ընկերուհիդ ոյր՝ «ի խորոց սրտի» մորմոքները լսեցի մահուընէք քանի մը օր առաջ, ամենուն հետ և ամենէն աւելի կ'ողբայ զքեզ:

Է՞ր ուրեմն մեռար դուն, որ համակ բարութիւն կը ճառագայթէիր և հայ օխուր ու ազքատ իրականութեան մէջ ժպիտ և հագեկան հարստութեանց մարմնացումը կը ներկայացնէիր:

Ինչո՞ւ չի մեռնին անոնք՝ որ իրենց նմանին վիշտն են և արատը: Ինչո՞ւ չի մեռնին անոնք՝ որ բիւրաւորներ և միլիօնաւորներ իրենց կրքին կը զսեն անգթօրէն: Վերջապէս, ինչո՞ւ չի մեռնին անոնք՝ որ գիտութիւնը կը կիրարկեն իբրեւ միջոց մահացութեան անթիւ անմեղներու, փոխանակ «Փասթէօրեան» գիւտերով մարզը պաշտպանելու մահուան դէմ: Ահ, մինչեւ ե՞րբ Աթենաս տեղի պիտի տայ մայիգին Արէսին: Մարդկութիւնը ե՞րբ պիտի ողջունէ սիրոյ, արգարութեան և խաղաղութեան երջանիկ սակեգարը: Ե՞րբ բնութեան գանձերը և ուժերը սոսկ մարդկային բարւոյն խաբաս պիտի գրուին, և գիտութիւնը՝ փոխանակ անսիրտ եռասիրութեան կամ խելագար փառասիրութեան մահասկիւնէն ձեռքերուն մէջ իբրեւ դժոխաստեղծ միջոց մը ծառայելու, մարդկային երջանկութիւնն ու կեանքի պաշտամունքը պիտի ընտրէ նպատակակէտ:

Բայց, քու, վաղամեակի էլ պիտի, և քեզ նման անթիւ անմեղ զոհերու վիշտն զիս շատ հեռունները տարաւ ... Բարիներու, անմեղներու և օգակարներու կորուստին պատճառած կակիծը նոյնքան խոր և արգար է, որքան սիրելիներունը: Եւ ես, իբրեւ հիացողներէդ մին, տիրամուշ յիշատակներուդ հանդէպ զգացած թոխ բիւրեղը կը փութամ գալ Անապատէն ընդելուզելու Յուշարձանի վրայ:

Աւ ընկալ ուրեմն, հոգի՛դ երկնատլաց, և իմ այ խոսնկն յարգանքի՝ զոր կը ձօնեմ տաղանդիդ և բարութեանդ:

Հ. ԵՐԱՄԵՆ,



## ԱՐՈՒԷՏՍԱԳԻՏՈՒՂԻԻ ՄԸ ԴԱԳԱՂԻՆ ԱՌՋԵԻ

Տիկին, ժողովուրդը ձեզի կը սպասէ :

Ձէ՞ք լսեր նուագահանդէսի լուսազարդ սրահէն բարձրացող սա՛ մեծազորդ ազմուկը : Ահաւասի՛կ արուեստասէրներու ծափահարութիւնները սրանք հողմայոյզ ծովու կոհակներու նման իրարու կը յաջորդեն : Ականջ տուէք խանդավառներու ազազակին որ ժխտալից ալիքներու վերեւ ճախրող սպիտակ ազկիտներու կռիւնչին պէս կը հնչէ, մերթ ընդ մերթ երկարաձգուող ծափերու ընդմէջէն :

Լսեցէ՛ք, Տիկին, ձեզ է որ կը կանչեն, ( ձեր գեղաշնորհ արուեստին հրաւէր կը կարգան անոնք դարձեալ, թախանձանքս, ու կարօտազին :

Օ՛ն, դէպի լայնարաց ձեր դաշնակը :


Կը դանդաղի՞ք ...

Եթէ կը խորհիք, սակայն, թէ տժգոյն էք, մեռելի մը պէս տժգոյն, փոյթ մի՛ ընէք. եկէ՛ք ինչպէս որ էք. զի մենք եւս ձեզի նման դալկադէմ ենք, այս վայրկեանիս, և մահուան գաղափարէն այլագունած : Կամ եթէ կը վախնաք թէ ձիւնաթոյր ստեղծները ձեր նուագարանին պիտի մտնեն ձեզ այս հեղ, և դուք, անոնց առջեւ, ստուերի մը նման պիտի դողդաղք, ձեզի թող փոյթ չ'ըլլայ ատրկա, քանի որ մեր աչքերը պիտի վարագուրուին ընդհուպ ձեր նուագէն, և ո՛չ ոք և ոչինչ պիտի տեսնենք այլ միայն անբաժան զոյգ ոգիները լուսադէմ Յոյսին ու անհունօրէն մը ատարած սեւ Տառապանքին :

Օ՛ն, Տիկին, դէպի դաշնակը լայնարաց :


Բայց դուք կը յամառիք դեռ չի շարժիլ, ու ծափահարութիւնները նուագահանդէսի սրահին քրքիջներու նման կը հնչեն հիմա ու կը ծաղրեն՝ կարծես՝ Կեանքն ու Արուեստը, և բարձրաձայն կը ծիծաղին, որ երկնասլաց ձեր նուագին հետ՝ շատ շուտ գետին նկու ձեր դէմքին ժպիտը, մեռած ազու թռչունի մը պէս թեւորած, ու ձեր նայուածքներուն լուսաշող հոյլը աւելի արեւոտամեցաւ քան այն ծաղկեփունջը, զոր երկնաշնորհ ձեր առջեւ տարփածուները մատուցին ձեզ՝ վերջին անգամ՝ յուրան ան ձեռքով ... :

ՄԻՂՐԱՆ Յ. ԱԹՏԵՐԵԱՆ






# ԳՈՐԾՈՂ ԱՆԾՁԵՐՆԵ



1. — Իշխանունի Սօնիա Ասասուրօձ օր. Ն. ՇԱՂՈՅՆԱՆ
2. — Զարունի Սուլարեանց (Սօնիայի Բուզինք) օր. ՆՈՒԱՐԳ
3. — Ասդիկ (Սօնիայի դուստր) օր. Ս. ՓԱՓԱԶՆԱՆ
4. — Նունիկ (Սօնիայի վաղեմի աղախինք) օր. ԱՆԱՀԻՑ
5. — Զօրաւար Իշխան Բագրուս Ասասուրօձ Պ. Ս. ՓԱՓԱԶՆԱՆ
6. — Թելուեանց (Բանաստեղծ, Իշխանին մերիմք) Պ. Վ. ԿԻԻՐՃՆԱՆ
7. — Տօք. Հախումօձ (Գործիչք) Պ. Օ. ՎՈՒԹԷՐ
8. — Արեակ Ագարեանց (Նկարիչ) Պ. Թ. ՏԵՐ-ԱՆԳՐԷՍՅԱՆ
9. — Սահակ Արամօձ (Ուսանող կամաւոր, Զարունիի նշանածք) Պ. Ա. ԱՐԱՄՅՈՅ
10. — Ֆօն Շաֆեն (Գերման սպայ) Պ. Վ. ԿԻԻՐՃՆԱՆ
11. — Եագոր (Ասասուրօձի վաղեմի ծառան) Պ. Ե. ՄԻՆԱՍՅԱՆ
12. Սարօ (Երթասարգ սպասաւոր) Պ. Զ. ՍՎԱՃՆԱՆ

Վիրաւորներ, Հիւանդապահներ, Զինուորներ:

Եւն.



Գործողները կը բաւալի Տփղիս՝ Զօր. Իշխան Բագրուս Ասասուրօձի յարկին տակ, յետոյ սահմանադրական վրայ՝ կարմիր հաշի հիւանդանոցի մը մեջ ու շուրջը:

12  
Նամ

խոս

ԱՆ



# ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ԱՆԱՊԱՏԻՆ ՅՈՒՇԱՐՉԱՆԸ» փոստի միջոցաւ ասացողներուն համար բացուած է բաժանորդագրութիւն մը հետեւեալ կերպով.

Իւրաքանչիւր հասարկն (բաղկացած 10 տետրէ) բաժնեգինն է 20 դր. ողջ:

Գիմել ներկնակին՝ հետեւեալ հասցեով.

**S. BARTÉVIAN**

B. P. N° 1500

Le Caire

*Գին իւրաքանչիւր տետրի*

2 ՂՐՇ. ՈՂՋ

ՆՈՅՆ ՇԵՂԻՆԱԿԷՆ

1.— ԲԱՅՔԱՅՈՒՄ (Սպառած)	
2.— ԿՐԻԿԵԱՆ ԱՐՀԱԻԻԲԸ (Սպառած)	
3.— ՀԱՅՈՒՇԻՆ (Սպառած)	
4.— ԱՐԻԻՆԻՆ ՄԱՏԵԱՆԸ	10 Ե. Ղ.
5.— ՉԱՅՆԸ ՀՆՉԵՅ !	15 Ե. Ղ.
6.— ԵԳԻՊՏԱՀԱՅ ՏԱՐԵՅՈՅՅԸ, Ա. ՀԱՏՆՐ (1914)	25 Ե. Ղ.
» » Բ. ՀԱՏՆՐ (1915)	
» » Գ. ՀԱՏՆՐ (1916)	
7.— «ՀՈՍԱՆՔ»Ի ՀԱՌԱՔԱՇՈՒՆ	50 Ե. Ղ.







